

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 17.05.2021թ. թիվ 2112737199, 2112737198 և 2112737203 որոշումները բեկանելու և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթները կարճելու մասին

<<01>> 06 2021թ. 7-13- 8809

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Շավարշ Ներսիսյանի ՄԴ/43381-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Ալիխանյան Եղբայրների փողոցի 1/1 տան բնակիչ Շավարշ Ներսիսյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 17.05.2021թ. թիվ 2112737199, 2112737198, 2112737203 և 2112737197 որոշումներից երեքը՝ նշելով, որ դրանք կայացվել են նույն իրավախախտման համար:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի խնդրանքը ենթակա է քավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 17.05.2021թ. թիվ 2112737197 որոշման հիմքում դրված տեսանյութը համադրելով 17.05.2021թ. թիվ 2112737199, 2112737198, 2112737203 որոշումների հիմքերում դրված տեսանյութերի հետ պարզվում է, որ այդ որոշումները կայացվել են նույն իրավախախտման համար:

Այսպիսով, ակնհայտ է, որ նույն իրավախախտման համար կայացվել է չորս որոշում, ուստի 17.05.2021թ. թիվ 2112737199, 2112737198, 2112737203 որոշումները ենթակա են բեկանման, քանի որ դրանք հանդիսանում են տեխնիկական վրիպակի արդյունք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 293-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

### **Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու 17.05.2021թ. թիվ 2112737199, 2112737198, 2112737203 որոշումները բեկանել և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթները կարճել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Շավարշ Ներսիսյանին:



**Ե. Կարապետյան**